Պատմություն 2017
ՀԱՐՑԱՏՈՄՍ
11 - **րդ դասարան**

Ի. **ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ** (17 **միավոր**)

1) <<**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**>> (12 **միավոր**)

ա. ***Նշել ճիշտ պատասխանը**. 1–8–**րդ առաջադրանքներ**:* (0,5 X 8 = 4 **միավոր**)

1. **Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին ե՞րբ Էջմիածնում գումարեց Հայաստանի ազատագրության հարցին նվիրված գաղտնի ժողով**:
   1) 1677 թ. 3) 1679 թ.
   2) 1678 թ. 4) 1680 թ.
2. **Ե՞րբ Իսրայել Օրին դեսպանական խմբով ժամանեց Շամախի քաղաք**:
   1) 1701 թ. 3) 1708 թ.
   2) 1705 թ. 4) 1709 թ.
3. **Ո՞ր քաղաքում առաջին անգամ լույս ընծայվեց <<Նոր տետրակ, որ կոչի յորդորակ>> գիրքը**:
   1) Կալկաթա 3) Բոմբեյ
   2) Մադրաս 4) Ագրա
4. **Ե՞րբ հրապարակվեց Հայոց եկեղեցուն վերաբերող կանոնադրությունը** (**պոլոժենիե**):
   1) 1830 թ. մարտի 11-ին 3) 1830 թ. մարտի 31-ին
   2) 1836 թ. մարտի 21-ին 4) 1836 թ. մարտի 11-ին
5. **Բայազետի հայ կամավորներից ո՞վ կարողացավ ծպտյալ անցնել թշնամու օղակով և տեղեկացնել գեներալ Արշակ Տեր-Ղուկասովին բերդի օրհասական դրության մասին**:
   1) Սամսոն Տեր-Պետրոսյան 3) Սամսոն Տեր-Պողոսյան
   2) Հակոբ Տեր-Պողոսյան 4) Սիմոն Տեր-Պետրոսյան
6. **Ե՞րբ Օսմանյան կայսրության նահանգային իշխանավորներին ուղարկվեց Թալեաթի, Էնվերի և Նազըմի կողմից ստորագրված գաղտնի հրամանը, որով հրահանգվում էր խստորեն գործադրել հայերի ոչնչացման ծրագիրը**:
   1) 1915 թ. փետրվարի 25-ին 3) 1915 թ. ապրիլի 11-ին (նոր տոմարով՝ 24-ին)
   2) 1915 թ. ապրիլի 5-ին 4) 1915 թ. ապրիլի 15-ին
7. **1915 թ. մայիսին ո՞ւմ գլխավորած կամավորական ջոկատը մտավ Շատախ գավառի կենտրոն Թաղ**:
   1) Անդրանիկ 3) Համազասպ
   2) Դրո 4) Վարդան
8. 1917 **թ. դեկտեմբերին Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար նշանակվեց՝**
   1) Ալեքսանդր Մյասնիկյանը 3) Ստեփան Շահումյանը
   2) Վառլամ Ավանեսյանը 4) Սարգիս Լուկաշինը

բ. Լրացնել պատասխանը: **(1 X 4 = 4 միավոր)**

1. **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:** (1 **միավոր**)

ա) Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության հիմնադրումը
բ) Հնչակյան կուսակցության ծրագրի հրատարակումը
գ) Գրիգոր Արծրունու գլխավորությամբ գաղտնի խմբակի ստեղծումը Թիֆլիսում
դ) Հնչակյան կուսակցության պառակտումը
ե) Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
զ) Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադրումը

1	2	3	4	5	6

2. **Մշակութային իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության**: (1 **միավոր**)

ա) <<Բազմավեպ>> հանդեսի տպագրության սկիզբը
բ) <<Համատարած աշխարհացույց>> քարտեզի հրատարակումը Ամստերդամում
գ) Հայ իրականության մեջ առաջին երկսեռ դպրոցի բացումը Կալկաթայում
դ) Առաքել Դավրիժեցու <<Գիրք պատմութեանց>> աշխատության առաջին տպագրությունը
ե) Երեմիա Քեոմուրճյանի կողմից տպարանի հիմնադրումը Կ.Պոլսում
զ) Մովսես Խորենացու <<Հայոց պատմության>> հրատարակումը ռուսերենով Ս. Պետեր-բուրգում

1	2	3	4	5	6

3. **Համապատասխանեցնել ազատագրական խմբակների և նրանց ստեղծման վայրերի անունները:** (1 **միավոր**)

1) <<Միություն ի փրկություն>>
2) <<Բարենպատակ ընկերություն>>
3) <<Հայրենասերների միություն>>
4) <<Պաշտպան հայրենյաց>>
5) <<Հայասեր-ազգասեր>>

1	2	3	4	5

ա) Ալեքսանդրապոլ
բ) Կարին
գ) Վան
դ) Կ.Պոլիս
ե) Երևան
զ) Մոսկվա

4. **Համապատասխանեցնել հեղինակների և նրանց ստեղծագործությունների անունները**: (1 **միավոր**)

1) Հովհաննես Այվազովսկի
2) Գևորգ Բաշինջաղյան
3) Գալուստ Կոստանդյան
4) Ստեփանոս Պալասանյան
5) Վարդգես Սուրենյանց

1	2	3	4	5

ա) <<Պատմություն հայոց>>
բ) <<Մեթոդի վրա>>
գ) <<Եղիշե Չարենցի դիմանկարը>>
դ) <<Սալոմե>>
ե) <<Խրիմյան Հայրիկը էջմիածնում>>
զ) <<Ս. Ղազար կղզին գիշերով>>

գ. Գրել պատասխանները: (1 X 4 = 4 **միավոր**)

1. **Տրվածներից առանձնացնել երկու կետ, որոնք Շահամիր Շահամիրյանի կազմած հայկական պետականության վերականգնման նախագծի հոդվածներից չեն:**
(0,5 X 2 = **1 միավոր)**

ա) Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:
բ) Կառավարությունը գլխավորելու էր ազգությամբ հայ նախարարը:
գ) Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմվելու էին կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկվելու Վրաստան:
դ) Հայաստանի կառավարությունը պետերբուրգում պետք է ունենար իր դեսպանը:
ե) Հայաստանում 20 տարի ժամկետով տեղակայվելու էր 6-հազարանոց ռուսական զորք:
զ) Հայաստանի մայրաքաղաքն էր դառնալու Վաղարշապատը կամ Անին:

2. **Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ:** (0,5 X 2 = **1 միավոր)**

ա) Հովհաննես Թութունջին 1666 թ. ժամանել է Փարիզ և հավաստիացրել ֆրանսիական արքունիքին, որ հայերը հույների հետ միասին պատրաստ են ապստամբել Օսմանյան կայսրության դեմ:

բ) Մահտեսի Շահմուրադը ճանապարհորդել է Եթովպիա՝ այդ երկիրը ևս հակաթուրքական պայքարի մեջ ընդգրկելու նպատակով:

գ) Իսրայել Օրին Կ.Պոլսից ուղևորվում է Իտալիա, որից հետո անցնում է Ֆրանսիա և մտնում զինվորական ծառայության՝ ստանալով սպայի աստիճան:

դ) Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունում Իսրայել Օրուն խորհուրդ են տալիս դադարեցնել բանակցությունները եվրոպական երկրների հետ և բանակցություններ սկսել ռուսական պետության հետ:

ե) 1701 թ. ամռանը Իսրայել Օրին գնում է Ռուսաստան և Պետրոս Ի-ին է ներկայացնում Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու իր ծրագիրը, որը հայտնի է Մոսկովյան անունով:

3. **Արևմտահայերի ազգային սահմանադրության վերաբերյալ ստորև բերված պնդումներից նշել երկուսը, որոնք ճիշտ չեն**: (0,5 X 2 = **1 միավոր)**

ա) 1857 թ. Կ.Պոլսի ուսումնական խորհրդի անդամներ Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Ն. Պալյանը և ուրիշներ մշակում են արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն և ներկայացնում համայնքի ընդհանուր ժողովի հաստատմանը:

բ) 1863 թ. մայիսի 17-ին Կ.Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատում կանոնադրությունը:

գ) Նիկողայոս Պալյանի առաջարկությամբ այն կոչում են <<Ազգային սահմանադրություն>>:

դ) Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվում էին արևմտահայության կյանքը կազմակերպող մարմիններ՝ Ազգային ժողով, Ազգային կենտրոնական վարչություն, ազգային կյանքի տարբեր բնագավառներ սպասարկող խորհուրդներ:

ե) Ազգային ժողովը՝ որպես օրենսդիր մարմին, ընտրվում էր ամբողջ ազգի կողմից:

զ) Մկրտիչ Խրիմյանի շնորհիվ, ով 1869 թ. դարձել էր Կ.Պոլսի հայոց պատրիարք, սահմանադրությունը գործադրվեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում:

4. **Ստորև բերվածներից ընտրել երկու ճիշտ պնդում**: (0,5 X 2 = **1 միավոր)**

ա) 1836-1837 թթ. Մխիթարյանները հրատարակում են <<Նոր բառգիրք Հայկազյան լեզուի>> մեծարժեք բառարանը:
բ) 19-րդ դարի հայտնի քնարերգու բանաստեղծ էր Հարություն Ալամդարյանը, որի ջանքերով Կալկաթայում 1846 թ. բացվել է հայ իրականության մեջ առաջին երկսեռ դպրոցը:
գ) Մեսրոպ Թաղիադյանը (1803-1858) հանրագիտակ մտավորական էր, բանաստեղծ, պատմաբան, խմբագիր, մանկավարժ, որի՝ տեսուչ աշխատած տարիներին Ներսիսյան դպրոցը վերածվեց հայ կրթական կյանքի կենտրոնի:
դ) 1829 թ. սեպտեմբերին Խաչատուր Աբովյանը Դորպատի (այժմ՝ Տարտու) համալսարանի պրոֆեսոր Ֆ.Պարրոտի հետ եղել է Արարատի գագաթն առաջինը նվաճած արշավախմբի կազմում:
ե) Պոլսահայ Համբարձում Լիմոնճյանի մեծ ծառայությունը 1830 թ. հայկական նոր ձայնագրության ստեղծումն էր:
զ) Վիեննայում լույս տեսած <<Տիեզերական պատմություն>> երկհատորյակը, որը հայերենով գրված համաշխարհային պատմության առաջին ձեռնարկն էր, մեծ ճանաչում է բերում Ղուկաս Ինճիճյանին:

2) <<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> (5 **միավոր**)

ա. ***Նշել ճիշտ պատասխանը. 1–4-րդ առաջադրանքներ:*** (0,5 X 4 = 2 **միավոր**)

1. **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկվածներից ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել վերջինը**:
   1) Հռոմի գրավումը վեստգոթերի առաջնորդ Ալարիխի կողմից
   2) Տիզբոնի գրավումը Տրայանոս կայսեր կողմից
   3) Գերմանական (Տևտոնական) թագավորության ծննունդը
   4) Խաչակրաց արշավանքի կազմակերպումը ալբիգոյների դեմ
   5) Վորմսի համաձայնագրի ստորագրումը

2. **Ո՞վ է «Աստվածային կատակերգություն» պոեմի հեղինակը** :
   1) Ֆրանչեսկո Պետրարկա
   2) Դանթե Ալիգիերի
   3) Թովմա Աքվինացի
   4) Պետրոս Աբելյար

3. **Հռոմեական ո՞ր կայսեր օրոք Գալլիայի բնակիչները Ծերակույտում ընտրվելու իրավունք ստացան:**
   1) Դիոկղետիանոս
   2) Վեսպասիանոս
   3) Տիբերիոս
   4) Կլավդիոս

4. **Ե՞րբ է կնքվել խորհրդա-իրանական պայմանագիրը:**
   1) 1919 թ.
   2) 1928 թ.
   3) 1921 թ
   4) 1924 թ

բ. (1 X 2 = 2 **միավոր**)

1. **Գործիչների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձությունների հետ**: (1 **միավոր**)

1) Ֆլավիոսների հարստության հիմնադրումը
2) Պուատիե ճակատամարտը
3) Բուլղարական թագավորության նվաճումը
4) Սեֆյանների պետության հիմնադրումը
5) Կուլիկովոյի ճակատամարտը
6) Չինաստանի նվաճումը

ա) Կարլոս Մարտել
բ) Վեսպասիանոս
գ) Խուբիլայ
դ) Դմիտրի
ե) Իսմայիլ
զ) Վասիլ II
է) Նադիր

1	2	3	4	5	6

2. **Իրադարձությունները դասավորել ըստ դրանց ժամանակագրական հաջորդականության:** *(1 **միավոր**)*

ա) Բրիան-Քելլոգի պակտի ստորագրումը
բ) Ֆրանսիական զորքերի կողմից Սիրիայի արևմուտքի ռազմակալումը
գ) Ճապոնիայի դուրս գալը Ազգերի լիգայից

դ) Իտալական բանակի ներխուժումը Եթովպիա
ե) Անգլո-ամերիկյան զորքերի մուտքը Իտալիա
զ) Հակակոմինտերնյան պակտի ստորագրումը Գերմանիայի և Ճապոնիայի միջև

1	2	3	4	5	6

գ. (0,5 X 2 = 1 **միավոր**)

1. **Բերված պնդումներից ընտրել երկու ճիշտ պատասխան**:

ա) 1941-1942 թթ. Իրանի տարածքը ռազմակալվեց խորհրդային, անգլիական և ֆրանսիական զորքերի կողմից:
բ) 1939 թ. նոյեմբերի 30-ին խորհրդային զորքերը ներխուժեցին Լատվիա, Լիտվա, Էստոնիա:
գ) 1932-1934 թթ. Ժնևում անցկացվեց սպառազինությունների կրճատման ու զինաթափման հարցերին նվիրված միջազգային կոնֆերանս:
դ) 1898 թ. ԱՄՆ-ը Կուբային օգնելու պատրվակով պատերազմ հայտարարեց Իսպանիային:
ե) 1928 թ. Չինաստանում սկսված քաղաքացիական պատերազմն ավարտվեց ականավոր հեղափոխական Սուն Յաթսենի հաղթանակով:
զ) 1936 թ. Հնդկաստանի ազգային կոնգրեսի նախագահ ընտրվեց Մահաթմա Գանդին:

1	2

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (3 **միավոր**)

1. **Հայկական հարցը 1912-1914 թթ**.

ա. **Հայկական հարցի վերաբացումը**
բ. **Դիվանագիտական պայքարը Հայկական հարցի շուրջ**
գ. 1914 **թ**. **հունվարի** 26-**ի ռուս-թուրքական համաձայնագիրը**:

Է. Մինասյան
Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմագիտության դոկտոր, **պրոֆեսոր**

17.04.2017 թ.